ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՋԻԼԱՎՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ ԿԱՄՈՅԻ

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հիմնական մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ДЖИЛАВЯН СВЕТЛАНА КАМОЕВНА

Основные механизмы гражданского контроля над вооруженными силами в Республике Армения и Российской Федерации

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է **Երևանի պետական համալսարանում**
Գիտական ղեկավար՝
քաղաքական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Սեյրանի Ալեքսանյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Վահե Սամվելի Դավթյան**
քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ **Նարեկ Հրանտի Գրիգորյան**

Առաջատար կազմակերպություն՝ Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի, հունիսի 29-ին ժամը 13:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:
Հասցեն ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2026 թվականի մայիսի 29-ին:
ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սարգսյան Առնակ Գեորգիի**

Тема диссертации утверждена **в Ереванском государственном университете**.

Научный руководитель:
доктор политических наук, профессор **Ашот Сейранович Алексанян**
Официальные оппоненты:
доктор политических наук, профессор **Ваге Самвелович Давтян**
кандидат политических наук, доцент **Нарек Грантович Григорян**
Ведущая Организация: Государственный университет имени В. Я. Брюсова
Защита состоится 29 июня 2026 г. в 13:00, на заседании, действующего в ЕГУ специализированного совета 056 «Политология и международные отношения» МОНКС КВОН РА. Адрес: г. Ереван, ул. Алека Манукяна, 1, 0025, РА. С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ.
Автореферат разослан 29 мая 2026 г.
Научный секретарь специализированного совета 056 МОНКС КВОН/РА,
кандидат политических наук, доцент **Саргсян Арнак Георгиевич**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ուսումնասիրությունը առանձնակի արդիականություն է ձեռք բերում ժամանակակից աշխարհաքաղաքական մարտահրավերների և ռազմական բախումների պայմաններում: Այս թեմայի կարևորությունը պայմանավորված է մի շարք փոխկապակցված գործոններով:

Նախ՝ պատերազմների, հակամարտությունների և ռազմական բախումների ժամանակ զինծառայողների իրավունքների ոտնահարման ռիսկը զգալիորեն մեծանում է, ինչն ընդգծում է խորհրդարանական և քաղաքացիական վերահսկողության կարևորությունը նման խախտումները կանխելու և զինված ուժերի գործունեությունը մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու գործում: Հայաստանը և Ռուսաստանը, պարբերաբար հայտնվելով ռազմական լարվածության կիզակետում, բախվում են այս խնդրին: Մասնավորապես, 2016 թվականի ապրիլյան, 2020 թվականի 44-օրյա պատերազմները և 2022 թվականի սեպտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի վրա հարձակումները բացահայտեցին զինծառայողների իրավունքների պաշտպանության, ռեսուրսների կառավարման, վարքային դրսևորումների, զինված ուժերի տեխնիկական ու մասնագիտական և հանրային վստահության ապահովման ոլորտում առկա համակարգային խնդիրները: Իսկ Ռուսաստանում, որտեղ ռազմական կառույցները գործում են կենտրոնացված կառավարման պայմաններում, զինծառայողների իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրները հաճախ ստորադասվում են՝ պայմանավորված վերահսկողության սահմանափակ թափանցիկությամբ և քաղաքացիական հասարակության ներգրավվածության ցածր մակարդակով: Երկու երկրների փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել արդյունավետ մեխանիզմներ՝ զինծառայողների իրավունքների պաշտպանության և ռազմական գործընթացների ժողովրդավարական վերահսկողության ապահովման համար: Միաժամանակ, զինված ուժերում առկա մարտահրավերների քննարկումը թույլ է տալիս գտնել դրանց հնարավոր լուծման ուղիները:

Երկրորդ՝ թեմայի արդիականությունը պայմանվորված է նաև այն հանգամանքով, որ ժամանակակից աշխարհաքաղաքական պայմաններում բանակը, հանդիսանալով հասարակության, պետության և մարդու անվտանգության ու դիմակայունության առաջնային երաշխավորներից մեկը, պետք է գործի քաղաքացիական վերահսկողության ներքո: Այս վերահսկողության բացակայությունը, ֆորմալ բնույթը կամ թույլ կողմերը կարող են խաթարել ժողովրդավարական արժեքների պահպանումը, հանգեցնել զինված ուժերի կողմից իրենց լիազորությունների և պարտականությունների սահմանների խախտմանը, ինչպես նաև նպաստել իշխանության չարաշահմանը կամ համակարգային կոռուպցիայի ռիսկերի մեծացմանը: Հայաստանի և Ռուսաստանի դեպքում, որտեղ ռազմական կառույցները

կենտրոնական դեր են խաղում ազգային անվտանգության ապահովման գործում, քաղաքացիական վերահսկողության ամրապնդումը, դրա մեխանիզմների կատարելագործումը դառնում են կարևոր գործոն՝ ժողովրդավարական սկզբունքների պաշտպանության և պետական ինստիտուտների օրինականության երաշխավորման համար:

Երրորդ՝ Ռուսաստանի Դաշնությունը՝ որպես Հայաստանի ռազմավարական դաշնակից, իր կենտրոնացված հանրային կառավարման համակարգով ներկայացնում է քաղաքացիական վերահսկողության համապարփակ մոդել: Ռուսաստանի ռազմական կառույցների կենտրոնաձիգ բնույթը, օրենսդրական սահմանափակումները և քաղաքացիական հասարակության ներգրավվածության նվազագույն (ցածր) մակարդակը խոչընդոտում են թափանցիկության և հաշվետվողականության ապահովմանը: Ռուսաստանի և Հայաստանի փոխգործակցությունը, մասնավորապես՝ համատեղ ռազմական գործողությունների և անվտանգության ռազմավարությունների համատեքստում, ընդգծում է երկու երկրների վերահսկողական համակարգերի վերլուծության անհրաժեշտությունը: Այս առումով, քաղաքացիական վերահսկողության կատարելագործումը կարող է էապես նպաստել Հայաստանի և Ռուսաստանի ներքին կայունության ամրապնդմանը, հանրային վստահության բարձրացմանը և ընդհանուր նպատակների իրագործմանը՝ այդպիսով ամրապնդելով տարածաշրջանային անվտանգության համակարգը:

Չորրորդ՝ այս ուսումնասիրությունը ձեռք է բերում հրատապություն և նշանակություն, քանի որ միջազգային հարաբերությունների վերափոխման և ժողովրդավարական կառավարման սկզբունքների ամրապնդման համատեքստում քաղաքացիական վերահսկողությունը դառնում է բազմամակարդակ անվտանգության համակարգերի դիմակայության կարևոր բաղադրիչ: Հայաստանում 2015 թվականին խորհրդարանական կառավարման ձևին անցումը և ժողովրդավարական բարեփոխումների ընթացքը նոր հնարավորություններ են ստեղծում ցիվիլիարխիկ վերահսկողության մեխանիզմների զարգացման համար: Մինչդեռ ՌԴ-ում ուժեղ նախագահական ուղղահայացը և գործադիր իշխանության գերակայությունը հանրային իշխանության կազմակերպման և գործունեության մեխանիզմներում սահմանափակում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) գործառույթները երկրի ռազմաքաղաքական անվտանգության ապահովման գործում: Իսկ ՌԴ Սահմանադրությամբ սահմանված օրենսդրական վերահսկողական ոլորտներում հանրային իշխանության լիազորությունները շարունակում են բուռն քննարկումներ առաջացնել: Ինչն էլ իր հերթին ընդգծում է համեմատական վերլուծության կարևորությունը՝ բացահայտելու լավագույն մեխանիզմները ու բարեփոխումների ուղիները:

Այսպիսով, Հայաստանի և Ռուսաստանի զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության վերլուծությունը ժամանակակից պայմաններում ձեռք է բերում առանցքային նշանակություն: Այն հնարավորություն է ընձեռում բացահայտելու ցիվիլիարխիկ վերահսկողության համակարգերի ուժեղ և թույլ կողմերը, առաջարկելու կոնկրետ բարեփոխումներ և նպաստելու ժողովրդավարական

կառավարման սկզբունքների ամրապնդմանը՝ երաշխավորելով զինծառայողների իրավունքների պաշտպանությունը, ռազմաքաղաքական գործընթացների կառավարման թափանցիկությունը, բազմամակարդակ և համապարփակ անվտանգության մոդելների փոխլրացուցչությունը:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը:

Ատենախոսության թեման գտնվում է միջազգային հարաբերությունների և անվտանգության կառավարման ոլորտում կարևոր քննարկումների խաչմերուկում: Այս հետազոտությունը հիմնվում է իրավական պետության, բանակի և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների վերաբերյալ տեսական և գործնական ուսումնասիրությունների վրա՝ ընդգծելով քաղաքացիական վերահսկողության դերը ժողովրդավարական կառավարման և մարդու իրավունքների պաշտպանության գործում: Թեմայի գիտական մշակվածությունը հիմնված է ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից գիտական աշխատությունների վրա, որոնք վերլուծում են պետության և հասարակության փոխազդեցությունը, ինչպես նաև Հայաստանի և Ռուսաստանի առանձնահատկությունները: Հետազոտության համար կարևոր է եղել անդրադառնալ քաղաքացիական վերահսկողության գործիքակազմին, քանի որ այն հնարավորություն է ընձեռում ապահովելու զինված ուժերի գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ առանց ռազմական կառույցների օպերատիվ կարողությունների խաթարման: Հայաստանում և Ռուսաստանում քաղաքացիական վերահսկողությունը ձևավորվել է տարբեր պատմական, օրենսդրական և քաղաքական համատեքստերում, ինչը հնարավորություն է տվել համեմատական վերլուծության միջոցով բացահայտել այդ համակարգերի ուժեղ և թույլ կողմերը՝ հիմք ստեղծելով բարեփոխումների առաջարկների համար:

Ատենախոսության գիտական մշակվածությունն ապահովված է բազմաշերտ տեսական հենքով, հարուստ աղբյուրագիտական բազայով և միջազգային ու ներպետական համատեքստում հիմնավորված վերլուծությամբ: Քաղաքացիական վերահսկողության ինստիտուտի զարգացումը դիտարկվել է ինչպես քաղաքագիտության դասական, այնպես էլ պատմափիլիսոփայական, իրավաքաղաքական, սոցիոլոգիական, ռազմաքաղաքական և կառավարման տեսությունների համադրությամբ:

ԽՍՀՄ փլուզումը, Հայաստանում և Ռուսաստանում տեղի ունեցած ժողովրդավարական վերափոխումները պահանջեցին նոր մոտեցումներ՝ սահմանելու զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության բնույթն ու դերը: Ռազմական վերահսկողության նախորդ համակարգի փլուզումը առաջ է քաշել դրա փոխարինման, վերափոխման և նոր սոցիալական իրողություններին հարմարվելու հրատապ հարցը: Սա պայմանավորված է նրանով, որ մի կողմից՝ որևէ մեկի կամ որևէ բանի կողմից չվերահսկվող բանակը սպառնում է դառնալ հասարակության մեջ ինքնաբավ ուժ՝ մի տեսակ «պետություն պետության մեջ», մյուս կողմից՝ նման համակարգի բացակայությունը չափազանց բացասական ազդեցություն է ունենում բանակի՝ որպես սոցիալական ինստիտուտի վրա, քանի որ հասարակությունը քիչ է հասկանում իր ներքին խնդիրները և ի վիճակի չէ արագ արձագանքել դրանց և օգնել լուծմանը:

Զինված ուժերի նկատմամբ վերահսկողության խնդիրը վաղուց է մտահոգել բազմաթիվ պետությունների փիլիսոփաներին և ղեկավարներին: Տարբեր ժամանակների ականավոր մտածողներ կենտրոնացել են բանակի տեղի և դերի վրա հասարակության և պետության մեջ և հետևաբար դրա նկատմամբ վերահսկողության վրա: Մասնավորապես, սահմանվեցին քաղաքացիական վերահսկողության նպատակները, բացահայտվեց քաղաքացիական վերահսկողության արդյունավետության և քաղաքացիական ու ռազմական էլիտաների միջև ուժերի հավասարակշռության միջև եղած կապը[1], ինչպես նաև ուսումնասիրվեցին քաղաքացիական վերահսկողության հասկացությունների և տվյալ երկրի ազգային-պատմական առանձնահատկությունների ու ավանդույթների փոխկապակցվածությունը:

Քաղաքացիական վերահսկողության ոլորտում ռազմաքաղաքական անվտանգության տեսությունները ներկայացված են՝ Հ. Բորնի[2], Ս. Հանտինգթոնի[3], Մ. Ջանովիցի[4], Կ.Մ. Միլարի[5], ինչպես նաև Ջ. Ալտմանի[6], Գ. Դահո և Լ. Քլեյնի[7], Զ. Բարանիի[8], Գ. Քաֆորիոյի[9], Դ. Ինբոդիի[10] և այլոց մոտեցումներով, որոնք ներառվել են

---

[1] Տե՛ս Салихов Э.Т., Вооруженные силы и государство: философско-политические подходы к гражданскому контролю // Вопросы политологии. 2024. Т. 14. № 12 (112). С. 4203-4213, Aleksanyan, A. 2020. Civil Society as a Phenomenon of Post-Soviet Political Life: A Threat or a Guarantor of National Security. In: Mihr, A. (eds) Transformation and Development. Springer, Cham, pp. 29-49, Петров Д.Е., Полтораков А.Ю. Гражданский контроль над вооруженными силами: теория и практика Западных государств // NB: Национальная безопасность. 2013. № 3. С. 158-188

[2] Տե՛ս Born, H. (2006). Democratic Control of Armed Forces. In: Caforio, G. (eds) Handbook of the Sociology of the Military. Handbooks of Sociology and Social Research. Springer, New York, NY, pp. 151–165. https://doi.org/10.1007/0-387-34576-0_9.

[3] Տե՛ս Huntington, S. (1957). The Soldier and the State: The Theory and Politics of Civil-Military Relations. Cambridge, MA: Harvard University Press, pp. 85-113.

[4] Տե՛ս Janowitz, M. The Professional Soldier: A Social and Political Portrait. New York: Free Press, 1960, pp. 189-193.

[5] Տե՛ս Millar, K., (2016). Mutually Implicated Myths: The Democratic Control of the Armed Forces and Militarism. In: Bliesemann de Guevara, B. (eds) Myth and Narrative in International Politics. Palgrave Macmillan, London, pp. 173-191. https://doi.org/10.1057/978-1-137-53752-2_9.

[6] Տե՛ս Altmann, J. (2024). Confidence and Security Building Measures for Cyber Forces. In: Reuter, C. (eds) Information Technology for Peace and Security. Technology, Peace and Security I Technologie, Frieden und Sicherheit. Springer Vieweg, Wiesbaden, pp. 189–206. https://doi.org/10.1007/978-3-658-44810-3_9.

[7] Տե՛ս Daho, G., Klein, L. (2023). Political-Military Relations. Civil Supremacy Under the Test of Sovereignty. In: Daho, G., Richard, Y. (eds) War, State and Sovereignty. Palgrave Macmillan, Cham, pp. 113–133. https://doi.org/10.1007/978-3-031-33661-4_6.

[8] Տե՛ս Barany, Z. (2012). The Soldier and the Changing State: Building Democratic Armies in Africa, Asia, Europe, and the Americas. Princeton: Princeton University Press, p. 94-97.

[9] Տե՛ս Caforio, G., (2006). Handbook of the Sociology of the Military. New York: Springer, pp. 218-223.

[10] Տե՛ս Inbody, D., The Soldier and the State in the Post-Cold War Era. London: Routledge, 2015.

զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության համեմատական վերլուծության մեջ:

Հայրենական գրականությունը նույնպես պարունակում է որոշ աշխատանքներ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության տեղի և դերի վերաբերյալ: Մասնավորապես, ուշագրավ են Ա. Աթանեսյանի[11], Ա. Ենգոյանի[12], Տ. Քոչարյանի[13], Ա. Ալեքսանյանի[14], Վ. Աթոյանի[15], Ա. Շահվերդյանի[16], Ա. Մնացականյանի[17] և ուրիշների աշխատանքները: Նրանց աշխատություններում հիմնականում ուսումնասիրված են անվտանգության ոլորտում դիմակայության և քաղաքացիական վերահսկողության տեսական, կազմակերպչական և գործնական չափումները:

Օգտագործվել են հեղինակավոր միջազգային և համեմատական աղբյուրներ, ինչպիսիք են՝ Մ. Մակֆոլի[18], Թ. Ռայնհոլդի[19], Ս. Վեբեքի և Վ. Բաներջի[20], Ժ.Տեյշեյրայի, Լ. Պաիսի, Ն. Ռ. դոս Սանտոսի և Բ. դե Սոուզայի[21], Ս. Ռ. Բելի, Կ. Ս.

---

[11] Տե՛ս Атанесян А.В., «Безопасность человека»: концептуальные подходы и локальные измерения (на примере Армении) // Человек. Сообщество. Управление. 2014, №4: 30-44:

[12] Տե՛ս Ա. Ենգոյան, Ա. Սարգսյան, Խ. Ազատյան «Ազգ-բանակ» հայեցակարգի գաղափարաքաղաքական հիմքերը: Եր., ԵՊՀ հրատ., 2019, էջ 59-60:

[13] Տե՛ս Քոչարյան, Տ., Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմունքների վերաբերյալ դասընթաց: Եր.: Ասողիկ, 2014, Քոչարյան, Տ., Զինվորական ծառայության իրավական ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում: Եր.: Լիմուշ, 2008:

[14] Տե՛ս Aleksanyan, A. (2025). Russlands hybrider Einfluss auf die europäische Integration Armeniens durch den 44-Tage-Krieg: Lehren für Armenien. In: Leiße, O. (eds) Russische Schockwellen. Politik, Wirtschaft und Gesellschaft im Spannungsverhältnis der Regionen Südosteuropa und Mittlerer Osten. Springer VS, Wiesbaden, էջ 219–235:

[15] Տե՛ս Աթոյան Վ.., Ազգային անվտանգության հիմնախնդիրներ (դասախոսություններ): Եր.: «Տնտեսագետ», 2014:

[16] Տե՛ս Շահվերդյան Ա. Մ., Արտաքին քաղաքականության ձևավորման որոշ հարցեր՝ 44-օրյա պատերազմի ժամանակ Արցախում կատարված բնաոչնչացման դատապարտման օրինակով // ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, № 1, 2022, էջ 104-115:

[17] Տե՛ս Մնացականյան Ա., Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական որոշ հիմնահարցերի համառոտ վերլուծություն // Գիտական հոդվածների ժողովածու. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, 2016, էջ 88-96:

[18] Տե՛ս McFaul, M. (2018). From Cold War to hot peace: an American ambassador in Putin's Russia. New York: Houghton Mifflin Harcourt, pp. 425-490.

[19] Տե՛ս Reinhold, T. (2024). Military Cyber Activities in Russia's War Against Ukraine and Their Significance for the Debates on the Containment of a Cyberwar. In: Towards a Peaceful Development of Cyberspace. Technology, Peace and Security | Technologie, Frieden und Sicherheit. Springer Vieweg, Wiesbaden, pp. 122-129. https://doi.org/10.1007/978-3-658-43951-4_7.

[20] Տե՛ս Webeck, S., & Banerjee, V. (2026). Accountability, Bureaucratic Discretion, and Civil-Military Relations. Armed Forces & Society, 52(2), 499-535.

[21] Տե՛ս Teixeira, J., Pais, L., dos Santos, N. R., & de Sousa, B. (2024). Empowering Leadership in the Military: Pros and Cons. Merits, 4(4), 346-369. https://doi.org/10.3390/merits4040026.

Քլեյ, Գ. Կիյանի և Ա. Մերդի[22], Դ. Լ. Բլանդի[23], Պ. Մեդերիոսի[24], Գ. Կյումմելի[25], Պ. Էրկիլի[26] և այլոց աշխատանքները ռազմական և քաղաքացիական վերահսկողության փոխհարաբերությունների մասին՝ տեղայնացնելով դրանց կիրառման մեխանիզմները: Հատուկ կարևորություն է տրվել նաև ռուս հեղինակների՝ Վ.Կ. Բելոզերովի[27], Դ. Լ. Ցիբակովի[28], Վ.Վ. Վարսոնոֆևի[29] և այլոց աշխատանքներին, որոնք դիտարկվել են որպես հիմնարար աղբյուրներ ռուսական մոդելի քաղաքացիական վերահսկողության վերլուծության համար: Այս հեղինակները ներկայացրել են կարևոր տեսություններ զինված ուժերում վերահսկողության սահմանափակումների, կառավարման ձևերի, հասարակություն-բանակ հարաբերությունների և ինստիտուցիոնալ ձևակերպումների վերաբերյալ՝ նպաստելով ռուսական մոդելի բազմաբնույթ քննությանը թե՛ տեսական, թե՛ գործնական համատեքստում: Բացի տեսական աշխատանքներից՝ օգտագործվել է մեծածավալ կիրառական աղբյուրագիտական բազա, այդ թվում՝ ՀՀ և ՌԴ օրենսդրություն, միջազգային պայմանագրեր (ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵԽ, ՆԱՏՕ), քաղաքական փաստաթղթեր, պաշտոնական հաշվետվություններ, ՀԿ-ների և քաղաքացիական կառույցների զեկույցներ, ինչպես նաև վիճակագրական և փորձագիտական գնահատականներ: Այս բազմաշերտ և խորքային տեսական ու փաստաթղթային բազան հիմք է հանդիսացել Հայաստանի և Ռուսաստանի քաղաքացիական վերահսկողության մոդելների վերլուծության, դրանց ինստիտուցիոնալ բաղադրիչների համեմատության և բարեփոխումների առաջարկների ձևակերպման համար: Աշխատանքի գիտականությունը պայմանավորված է ոչ միայն կիրառված աղբյուրների

---

[22] Տե՛ս Bell, S., Clay, K., Kiyani, G., & Murdie, A. (2022). Civil–Military Relations and Human Rights. Armed Forces & Society, 48(3), 701-722.

[23] Տե՛ս Bland, D., (2001). Patterns in Liberal Democratic Civil-Military Relations. Armed Forces & Society, 27(4), 525-540, Bland, D., (1999). A Unified Theory of Civil-Military Relations. Armed Forces & Society, 26(1), 7-25.

[24] Տե՛ս Medeiros Passos, A. (2022). The Use of Violence by Military Personnel. In: Democracies at War Against Drugs. The Sciences Po Series in International Relations and Political Economy. Palgrave Macmillan, Cham, pp. 195-242. https://doi.org/10.1007/978-3-031-11327-7_6.

[25] Տե՛ս Kümmel, G. (2002). The Military and its Civilian Environment: Reflections on a Theory of Civil-Military Relations. Connections: The Quarterly Journal, 1(4), 63-82.

[26] Տե՛ս Erkkilä, T. (2020). Transnational Governance and Global Diffusion of the Ombudsman Institution. In: Ombudsman as a Global Institution. Public Sector Organizations. Palgrave Macmillan, Cham, pp. 21-63. https://doi.org/10.1007/978-3-030-32675-3_2.

[27] Տե՛ս Белозёров В. К., Развитие практики и теории гражданско-военных отношений в постсоветской россии. Контуры глобальных трансформаций: политика, экономика, право. 2017, 10 (3): 34-53. https://doi.org/10.23932/2542-0240-2017-10-3-34-53.

[28] Տե՛ս Цыбаков Д.Л. Трансформации гражданского общества современной России в период Специальной военной операции. Известия Юго-Западного государственного университета. Серия: История и право. 2023, 13 (5): 113-123. https://doi.org/10.21869/2223-1501-2023-13-5-113-123.

[29] Տե՛ս Варсонофьев В.В., Русская армия и национальная политика // Казачество. 2016. № 16 (3). С. 54-65:

ընդգրկունությամբ, այլև դրանց բազմադիսցիպլինար համադրությամբ, իրավաքաղաքական և ինստիտուցիոնալ վերլուծության մեջ ինտեգրմամբ:

Աշխատանքի օբյեկտը և առարկան: Աշխատանքի օբյեկտը Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների փոխլրացուցչությունն է: Ուսումնասիրության առարկան այդ մեխանիզմների ձևավորման իրավաքաղաքական նախադրյալներն են և դրանց ինստիտուցիոնալացման գործոնները՝ Հայաստանի և Ռուսաստանի ռազմաքաղաքացիական հարաբերությունների ռազմավարական հավասարակշռության պայմաններում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և վերլուծել ՀՀ և ՌԴ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները՝ բացահայտելով դրանց օրենսդրական, ինստիտուցիոնալ և գործնական առանձնահատկությունները, ինչպես նաև առաջարկելով կատարելագործման ուղիներ՝ ժողովրդավարական վերահսկողության և զինծառայողների իրավունքների պաշտպանության ամրապնդման համար: Առաջադրած նպատակի իրագործման համար անհրաժեշտ է լուծել որոշ հետազոտական խնդիրներ: Դրանցից են՝

- Ուսումնասիրել բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության տեսական հիմքերը և դրանց դերը համապարփակ անվտանգության համակարգում՝ ընդգծելով պետության, բանակի և քաղաքացիական հասարակության փոխազդեցությունը:
- Վերլուծել ՀՀ-ում քաղաքացիական վերահսկողության համակարգի ձևավորման օրենսդրական և ինստիտուցիոնալ նախադրյալները:
- Բացահայտել Հայաստանի պաշտպանական ոլորտում առկա մարտահրավերները և գնահատել բարելավման հնարավոր ուղիները:
- Ուսումնասիրել ՌԴ-ում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ընթացակարգերի առանձնահատկությունները և դրանց իրականացման մեխանիզմները:
- Ուսումնասիրել ՌԴ-ի բազմաստիճան անվտանգային համակարգը և դրա նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրականացումը:
- Իրականացնել Հայաստանի և Ռուսաստանի զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության համակարգերի համեմատական վերլուծություն՝ ընդգծելով դրանց ուժեղ և թույլ կողմերը:
- Առաջարկել կոնկրետ բարեփոխումներ՝ հիմնված ռազմաքաղաքացիական հարաբերություններում ռազմավարական հավասարակշռության (ՌՔՀՌՀ) մոդելի և ուղղված երկու երկրներում քաղաքացիական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը, ներառյալ օրենսդրական փոփոխություններ և անկախ վերահսկողական մարմինների ներդրում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության մեթոդաբանությունը հիմնված է միջազգային հարաբերությունների, անվտանգության կառավարման և ժողովրդավարական վերահսկողության տեսական մոտեցումների

վրա: Օգտագործվել են համակարգային, համեմատական և պատմական մեթոդներ, ինչպես նաև փաստաթղթերի վերլուծություն և դեպքերի ուսումնասիրություն: Թեմայի ամբողջական ընկալման համար ուսումնասիրվել է համապատասխան գրականությունը՝ կենտրոնանալով Հայաստանի և Ռուսաստանի զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների վրա, ինչը թույլ է տվել բացահայտել գիտական մոտեցումների տարբերություններն ու հետազոտական բացերը:

Հետազոտության մեջ կիրառվել են ինչպես որակական, այնպես էլ քանակական մեթոդներ: Որակական վերլուծությունը ներառել է օրենսդրական ակտերի, պաշտոնական զեկույցների, ՀԿ-ների հաշվետվությունների և գիտական հրապարակումների ուսումնասիրություն, իսկ քանակականը՝ ռազմական բյուջեների, վիճակագրական տվյալների և զինծառայողների իրավունքների խախտումների ցուցանիշների վերլուծություն: Տվյալները հավաքվել են Հայաստանի և Ռուսաստանի պաշտոնական աղբյուրներից, խորհրդարանական հաշվետվություններից, մարդու իրավունքների պաշտպանի և միջազգային կազմակերպությունների հրապարակումներից:

Հավաքված տեղեկատվությունը ՌՔՀՌՀ մոդելի միջոցով ենթարկվել է համեմատական վերլուծության և համակարգման՝ Հայաստանի և Ռուսաստանի քաղաքացիական վերահսկողության համակարգերի առանձնահատկությունները, դրանց արդյունավետությունն ու բարեփոխման հեռանկարները համապարփակ բացահայտելու նպատակով: Այս մոտեցումները հնարավորություն են տվել տեղավորել հետազոտությունը միջազգային հարաբերությունների և անվտանգության կառավարման ավելի լայն դիսկուրսի մեջ՝ առաջարկելով նոր լուծումներ և կատարելագործման ուղիներ:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը ՀՀ և ՌԴ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների փոխլրացուցչության համապարփակ և համեմատական վերլուծությունն է: Ի տարբերություն գոյություն ունեցող հետազոտությունների, որոնք հիմնականում կենտրոնանում են առանձին երկրների փորձի կամ ռազմական կառավարման ընդհանուր սկզբունքների վրա՝ այս աշխատանքը ներկայացնում է բազմաշերտ մոտեցում՝ ինտեգրելով օրենսդրական, ինստիտուցիոնալ և սոցիալ-քաղաքական գործոնների փոխազդեցությունը: Այն առաջարկում է նորարարական շրջանակ քաղաքացիական վերահսկողության արդյունավետության բարձրացման համար՝ հիմնվելով ՌՔՀՌՀ մոդելի վրա և հաշվի առնելով ժամանակակից աշխարհաքաղաքական մարտահրավերներն ու ժողովրդավարական կառավարման սկզբունքները:

Գիտական նորույթ պարունակող հիմնական արդյունքները ներառում են հետևյալը.

1. Աշխատանքը նորովի է լուսաբանում Հայաստանի խորհրդարանական և Ռուսաստանի նախագահական կառավարման ձևերի ազդեցությունը քաղաքացիական վերահսկողության արդյունավետության վրա՝ բացահայտելով

օրենսդրական թափանցիկության, ինստիտուցիոնալ անկախության և քաղաքացիական հասարակության ներգրավվածության գործոնների առանձնահատկությունները:

2. Հիմնավորվել է Հայաստանում և Ռուսաստանում ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը՝ որպես զինծառայողների իրավունքների պաշտպանության և ռազմական գործընթացների թափանցիկության ապահովման արդյունավետ մեխանիզմ: Այս առաջարկը նորարարական է Հայաստանի համատեքստում, որտեղ նման կառույց դեռևս բացակայում է, և Ռուսաստանի համար, որտեղ գործող օմբուդսմենի լիազորությունները սահմանափակ են: Միաժամանակ, հիմնավորվել է, որ Ռուսաստանում մինչ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրումը անհրաժեշտ է գործող օմբուդսմենի ինստիտուտի՝ զինված ուժերի ոլորտում լիազորությունների ընդլայնում և ռազմական ուղղվածությամբ նոր ստորաբաժանման ստեղծում:
3. Աշխատանքի շրջանակներում առաջին անգամ համակարգված ձևով վերլուծվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի (ՄԻՊ)՝ որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության գործառնական և ինստիտուցիոնալ մոդել: Հետազոտության արդյունքում ձևակերպվել է նոր գիտական մոտեցում, համաձայն որի՝

- ՄԻՊ ինստիտուտը կարող է դիտարկվել ոչ միայն որպես իրավական պաշտպանության մարմին, այլև՝ որպես մարդու իրավունքների պաշտպանությամբ պայմանավորված ռազմավարական քաղաքականության ձևավորման դերակատար,
- Առաջարկվել է լիազորությունների ընդլայնման ՌՔՀՌՀ մոդել, որը ներառում է պարտադիր կատարման ենթակա որոշումների ներկայացման հնարավորություն, ռեսուրսների մեծացում և զինված ուժերի ներսում գործող վերահսկողական մեխանիզմների հետ փոխլրացնող կապի հաստատում: Այս նորույթը հիմնավորում է մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների դերակատարման վերարժևորումը՝ հատկապես անվտանգային համակարգերում քաղաքացիական վերահսկողության գործառույթների խորացման անհրաժեշտությամբ պայմանավորված:

4. Ներկայացվել են զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության նոր սահմանումներ, որոնք անդրադառնում են դրա դրսևորումներին լայն և նեղ իմաստներով: Մասնավորապես, **լայն իմաստով** զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը ընկալվում է որպես ժողովրդավարական հասարակությունում զինված ուժերի տեղի և դերի որոշման բարդ և շարունակական սոցիալական գործընթաց: Դրա արդյունավետությունը որոշվում է ոչ միայն օրենսդրական շրջանակի որակով, գործող պետական և հասարակական մեխանիզմներով, այլև ամբողջ հասարակության և յուրաքանչյուր քաղաքացու քաղաքական մշակույթի բարձրացմամբ, ինչպես նաև հանրային գիտակցության և հոգեբանության

փոփոխությամբ: **Նեղ իմաստով** բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը՝ որպես սոցիալ-քաղաքական գործընթաց, ենթադրում է քաղաքացիական հասարակության և իրավական պետության, դաշնային և տեղական իշխանությունների միջև զինված ուժերի տեղի և դերի վերաբերյալ փոխազդեցության բնույթի և ձևերի հարցերի քննարկումը:

5. Աշխատանքը նոր լույս է սփռում Հայաստանի պաշտպանական ոլորտում առկա համակարգային խնդիրների վրա, մասնավորապես՝ ռեսուրսների կառավարման, հանրային վստահության և զինծառայողների իրավունքների պաշտպանության առումով՝ առաջարկելով կոնկրետ բարեփոխումներ, ներառյալ խորհրդարանական վերահսկողության ընդլայնումը և հասարակական կազմակերպությունների դերի ամրապնդումը:
6. Աշխատանքը «ազգ-բանակ» հայեցակարգը ներկայացնում է որպես մեզանում քաղաքացիական վերահսկողության ոչ ինստիտուցիոնալ՝ սոցիալական մակարդակի դրսևորում՝ հիմնված ՌՔՀՌՀ-ի մոդելի և ռազմաքաղաքացիական հարաբերությունների դասական տեսությունների վրա: Առաջին անգամ այն մեկնաբանվում է որպես հիբրիդային մոդել, որը միաժամանակ արտացոլում է Ջանովիցի ինտեգրացիոն մոտեցումը և հակադրվում Հանթինգտոնի պրոֆեսիոնալ տարանջատման սկզբունքին: Հիմնավորվում է, որ տվյալ հայեցակարգը կարող է դիտարկվել որպես բանակի նկատմամբ հասարակական վերահսկողության լրացուցիչ շերտ, որի արդյունավետությունը պայմանավորված է դրա ինստիտուցիոնալացման աստիճանով և իրավական մեխանիզմների առկայությամբ:
7. Աշխատանքում Հայաստանի զինված ուժերում պրոֆեսիոնալ բանակի ձևավորման գործընթացը դիտարկվում է որպես բազմաշերտ համակարգ, որի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն ֆինանսատնտեսական և կազմակերպչական գործոններով, այլև հասարակական վստահության մակարդակով և քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների զարգացմամբ: Աշխատությունում հիմնավորվում է, որ պրոֆեսիոնալ բանակի կայացման համար անհրաժեշտ է համադրել ռազմական բարեփոխումները սոցիալական և ինստիտուցիոնալ փոփոխությունների հետ՝ առաջարկելով դրանց ինտեգրված դիտարկման մոտեցում, ինչը հնարավորություն է տալիս նոր տեսանկյունից գնահատել Հայաստանի պաշտպանության համակարգի զարգացման հեռանկարները:
8. Հետազոտությունը հիմնավորել է, որ Ռուսաստանի ռազմական կառույցների կենտրոնաձիգ (փակ) բնույթը և քաղաքացիական հասարակության սահմանափակ ներգրավվածությունը խոչընդոտում են վերահսկողության թափանցիկությանը՝ առաջարկելով միջազգային փորձի վրա հիմնված լուծումներ, ինչպիսիք են Հանրային խորհրդի անկախության բարձրացումը և ՋԼՄ-ների դերի ընդլայնումը:
9. Աշխատանքի շրջանակներում բացահայտվել են Հայաստանի և Ռուսաստանի փոխգործակցության առանձնահատկությունները՝ հիմնավորելով, որ

քաղաքացիական վերահսկողության համակարգերի կատարելագործումը կարող է նպաստել ներքին կայունության ամրապնդմանը և տարածաշրջանային անվտանգության բարձրացմանը:

10. Աշխատանքի շրջանակներում բացահայտում են Ռուսաստանի բազմաստիճան անվտանգային համակարգի՝ դաշնային, տարածաշրջանային և տեղական մակարդակների միջև համագործակցության համակարգային թերությունները, որոնք պայմանավորված են կենտրոնացված որոշումների կայացմամբ, տեղեկատվության սահմանափակ հասանելիությամբ և տարածաշրջանային ինստիտուտների սահմանափակ ինքնավարությամբ: Հետազոտությունը նորովի մոդելավորում է այս մակարդակների միջև փոխգործակցության բացերը՝ ընդգծելով, որ քաղաքացիական վերահսկողության արդյունավետությունը կտրուկ նվազում է այս թույլ համագործակցության պայմաններում: Առաջարկվում է նոր հայեցակարգային շրջանակ, որը ներառում է տարածաշրջանային մակարդակում անվտանգային մարմինների լիազորությունների ընդլայնում, տեղական համայնքների ներգրավվածության խթանում և դաշնային մակարդակում թափանցիկության բարձրացում: Այս մոտեցումը նորարարական է, քանի որ առաջին անգամ առաջարկում է բազմաստիճան համակարգի բարեփոխում՝ հիմնված Հայաստանի խորհրդարանական վերահսկողության փորձի և միջազգային լավագույն փորձի համադրության վրա, որն ապահովում է քաղաքացիական հասարակության ավելի ակտիվ դերակատարություն և անվտանգային մարմինների միջև համակարգված փոխգործակցություն:

Այսպիսով, հետազոտությունը նպաստում է միջազգային հարաբերությունների և անվտանգության կառավարման գիտական դաշտին՝ առաջարկելով նոր տեսական և գործնական լուծումներ, որոնք կարող են կիրառվել Հայաստանում և Ռուսաստանում՝ ժողովրդավարական վերահսկողության և զինված ուժերի թափանցիկության ամրապնդման համար:

Հետազոտության գիտատեսական և կիրառական նշանակությունը: Ատենախոսության հիմնական դրույթները էականորեն հարստացնում են Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների վերաբերյալ ակադեմիական դիսկուրսը՝ առաջարկելով տեսական և գործնական նոր մոտեցումներ: Աշխատանքն ունի կիրառական լայն նշանակություն քաղաքականություն մշակողների, անվտանգության ոլորտի վերլուծաբանների, իրավապաշտպան կազմակերպությունների և կրթական հաստատությունների համար:

Ատենախոսության գիտատեսական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ այն նորովի է ներկայացնում քաղաքացիական վերահսկողության տեսությունը՝ դրա կիրառությունը դիտարկելով Հայաստանի խորհրդարանական և Ռուսաստանի կենտրոնացված մոդելների համատեքստում: Այն նպաստում է միջազգային հարաբերությունների, անվտանգության կառավարման և ժողովրդավարական վերահսկողության վերաբերյալ գիտական քննարկումների

զարգացմանը՝ առաջարկելով համեմատական վերլուծության նոր մոտեցում: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել քաղաքագիտության, պետական և ռազմական կառավարման կրթական ծրագրերում՝ մասնագետների պատրաստման նպատակով, հատկապես ժողովրդավարական վերահսկողության և անվտանգության քաղաքականության ոլորտներում:

Կիրառական առումով աշխատանքը կարող է ծառայել որպես ուղեցույց օրենսդիր և գործադիր մարմինների համար՝ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների բարելավման գործընթացում: Առաջարկվող լուծումները, այդ թվում՝ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրումը և խորհրդարանական վերահսկողության ընդլայնումը, կարող են նպաստել զինված ուժերի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը:

Աշխատանքը գործնական արժեք ունի նաև անվտանգության ոլորտի վերլուծաբանների և մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպությունների համար՝ բացահայտելով զինծառայողների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները և առաջարկելով լուծումներ՝ միջազգային փորձի հիման վրա:

Այսպիսով, ատենախոսությունն ունի ինչպես գիտատեսական, այնպես էլ կիրառական նշանակություն՝ նպաստելով քաղաքացիական վերահսկողության տեսության զարգացմանն ու դրա գործնական կիրառելիությանը Հայաստանի և Ռուսաստանի անվտանգային համակարգերում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները քննարկվել են Հայ-Ռուսական համալսարանի Միջազգային հարաբերությունների և հասարակաքաղաքական գիտությունների ինստիտուտի Կ. Ա. Միրումյանի անվան Քաղաքագիտության ամբիոնում: Ատենախոսության հիմնական դրույթները տպարգվել են թվով 12 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ ութ ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, սահմանվում են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, ինչպես նաև հիմնախնդրի գիտական մշակվածությունը, ատենախոսության մեթոդաբանությունը ու գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «**Բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը բազմամակարդակ անվտանգության ամրապնդման գործոն**» գլխում տեսական և մեթոդաբանական հենքի շրջանակներում ուսումնասիրվում է բանակը՝ որպես հանրային կառավարման, քաղաքական իշխանության և ազգային անվտանգության համակարգի հիմնարար ինստիտուտ: Բացահայտվում են բանակի էությունը, գործառույթային առանձնահատկությունները և դրա դերը պետական

իշխանության իրականացման, քաղաքական կայունության ապահովման ու անվտանգության քաղաքականության ձևավորման գործընթացներում: Վերլուծվում են զինված ուժերի արտաքին և ներքին գործառույթները՝ արտաքին սպառնալիքների զսպումը, սահմանների պաշտպանությունը, ներքին կայունության ապահովումը, ինչպես նաև քաղաքական լեգիտիմության պահպանման և իշխանական հարաբերությունների վրա ազդեցության մեխանիզմները: Տեսական վերլուծությունը հիմնվում է Մ. Վեբերի, Կ. Կլաուզևիցի, Ս. Հանթինգթոնի և ռազմաքաղաքացիական հարաբերությունների այլ տեսաբանների մոտեցումների վրա՝ առանձնացնելով բանակի քաղաքական ներգրավվածության, ապաքաղաքականացման և քաղաքացիական վերահսկողության տարբեր մոդելներ:

Գլխում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բանակ–պետություն–քաղաքացիական հասարակություն փոխհարաբերությունների համակարգային վերլուծությանը՝ դիտարկելով դրանք որպես փոխկապակցված, սակայն ինստիտուցիոնալ առումով ինքնուրույն ենթահամակարգեր: Վերլուծվում են իրավական պետության և քաղաքացիական հասարակության պայմաններում բանակի գործունեության սահմանադրաիրավական հիմքերը, ինչպես նաև քաղաքացիական վերահսկողության ինստիտուցիոնալ և հասարակական մեխանիզմները: Քննարկվում է հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, արհմիությունների, կրոնական կառույցների և այլ հասարակական դերակատարների ազդեցությունը զինված ուժերի նկատմամբ հանրային վերահսկողության, թափանցիկության և հաշվետվողականության ապահովման գործընթացներում: Անդրադարձ է կատարվում ժողովրդավարական, ավտորիտար և ամբողջատիրական համակարգերում բանակ–հասարակություն հարաբերությունների առանձնահատկություններին՝ հիմնավորելով, որ ժողովրդավարական պետություններում զինված ուժերի արդյունավետ և պրոֆեսիոնալ գործունեությունը հնարավոր է միայն քաղաքական չեզոքության, իրավունքի գերակայության և ինստիտուցիոնալ քաղաքացիական վերահսկողության պայմաններում: Միաժամանակ քննության է առնվում ՀՀ-ում «ազգ-բանակ» հայեցակարգը՝ որպես ռազմաքաղաքացիական հարաբերությունների սոցիալական և արժեքային մոդել՝ գնահատելով դրա հնարավորություններն ու սահմանափակումները քաղաքացիական վերահսկողության համակարգում:

Գլուխը հետազոտում է նաև բանակի դերակատարումը որպես պետական իշխանության պահպանման, ճնշման և քաղաքականության գործադրման միջոց: Քննարկվում է բանակի ինստիտուցիոնալ բնույթը՝ Մ. Վեբերի «օրինական բռնության մենաշնորհի» տեսության հիման վրա, ինչպես նաև Ս. Հանթինգթոնի և Մ. Ջանովիցի վերլուծությունները՝ բանակի ապաքաղաքականացման և պրոֆեսիոնալիզմի մոդելների համատեքստում:

Վերլուծության շրջանակում վեր են հանվում պետություն–բանակ–քաղաքացիական հասարակություն փոխազդեցության հիմնական մոդելները, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է վերահսկողության տարբեր կառուցակարգեր՝ տոտալիտար, ավտորիտար և ժողովրդավարական: Ներկայացվում է այն թեզը, որ

քաղաքացիական վերահսկողության ինստիտուտներն արդյունավետ են միայն այն դեպքում, երբ քաղաքական մշակույթը, իրավական մեխանիզմներն ու հանրային ներգրավվածությունը ձևավորում են միասնական վերահսկողական միջավայր:

Երկրորդ՝ «**Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության համակարգի ձևավորման նախադրյալները ՀՀ-ում**» գլուխը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ինստիտուցիոնալ, իրավական և գործնական մեխանիզմների համակողմանի վերլուծությանը: Գլուխը դիտարկում է քաղաքացիական վերահսկողությունը որպես ժողովրդավարական պետական կառավարման հիմնարար բաղադրիչ, որի նպատակն է ապահովել զինված ուժերի ենթակայությունը քաղաքացիական իշխանությանը, ռազմական կառույցների հաշվետվողականությունը, քաղաքական չեզոքությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը: Վերլուծությունն իրականացվում է բազմամակարդակ մոտեցմամբ՝ ընդգրկելով ինչպես սահմանադրաիրավական հիմքերը և պետական վերահսկողական ինստիտուտների գործունեությունը, այնպես էլ ոլորտում առկա կառուցվածքային խնդիրներն ու բարեփոխումների ընթացքը:

Գլխում նախ ներկայացվում են ՀՀ Սահմանադրությամբ և ոլորտային օրենսդրությամբ ամրագրված քաղաքացիական վերահսկողության հիմնական սկզբունքները: Վերլուծվում է «Պաշտպանության մասին» օրենքի, ինչպես նաև սահմանադրական կարգավորումների դերը՝ զինված ուժերի քաղաքական չեզոքության, պաշտպանության նախարարի քաղաքացիական կարգավիճակի և Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների ամրագրման համատեքստում: Ընդգծվում է, որ իրավական մակարդակում ձևավորված են քաղաքացիական վերահսկողության անհրաժեշտ հիմքերը, սակայն դրանց գործնական կիրառումը շարունակում է բախվել ինստիտուցիոնալ և կառավարչական սահմանափակումների:

Գլխում ուսումնասիրվում են ՀՀ պաշտպանական համակարգի հիմնական մարտահրավերները, որոնք ազդում են քաղաքացիական վերահսկողության արդյունավետության վրա: Դրանց թվում առանձնացվում են գաղտնիության և թափանցիկության անհավասարակշռությունը, ֆինանսական վերահսկողության սահմանափակումները, կոռուպցիոն ռիսկերը, գնումների գործընթացների անթափանցիկությունը և կառավարման փակ մեխանիզմները, որոնք նվազեցնում են հանրային վստահությունը և վերահսկողական ինստիտուտների արդյունավետությունը:

Առանձին քննարկվում են զինված ուժերում առկա ոչ կանոնադրային հարաբերությունները, կարգապահական խնդիրները և պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու երևույթը՝ որպես քաղաքացիական վերահսկողության թերությունների դրսևորումներ: Միաժամանակ վերլուծվում են պաշտպանության ոլորտի արդի մարտահրավերները՝ կիբերանվտանգության սպառնալիքները, տեխնոլոգիական թերզարգացվածությունը, սպառազինության արդիականացման և պրոֆեսիոնալ բանակի ձևավորման խնդիրները:

Գլխում անդրադարձ է կատարվում նաև ՀՀ պաշտպանական բարեփոխումներին՝ կառավարման համակարգի վերակազմավորմանը, հակակոռուպցիոն ռազմավարություններին, կիբերանվտանգության զարգացմանը և

զինվորական ծառայության մոդելի փոփոխություններին: Միաժամանակ հիմնավորվում է, որ դրանց արդյունավետությունը դեռևս սահմանափակվում է ինստիտուցիոնալ թերություններով, թափանցիկության պակասով և վերահսկողական մեխանիզմների ոչ բավարար զարգացվածությամբ:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում վերահսկողության ինստիտուցիոնալ համակարգին: Գործադիր մակարդակում ուսումնասիրվում է վարչապետի, կառավարության, պաշտպանության նախարարության և Անվտանգության խորհրդի դերակատարությունը պաշտպանության քաղաքականության մշակման և ռազմավարական կառավարման գործընթացներում: Օրենսդիր վերահսկողության համատեքստում վերլուծվում են Ազգային ժողովի վերահսկողական գործառույթները՝ ռազմական բյուջեի հաստատման, պաշտպանության ոլորտի քաղաքականության մշտադիտարկման և հաշվետվողականության ապահովման տեսանկյունից: Միաժամանակ արձանագրվում է, որ խորհրդարանական վերահսկողության արդյունավետությունը սահմանափակվում է պաշտպանության ոլորտում տեղեկատվության մասնակի գաղտնիությամբ, բյուջետային վերահսկողության սահմանափակ գործիքակազմով և ռազմավարական որոշումների թափանցիկության ոչ բավարար մակարդակով:

Գլխում առանձին անդրադարձ է կատարվում անկախ վերահսկողական մեխանիզմներին՝ հատկապես Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի գործունեությանը: Վերլուծվում է ՄԻՊ-ի դերը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության, զինծառայողների իրավունքների խախտումների բացահայտման և համակարգային խնդիրների մոնիթորինգի գործընթացներում: Միաժամանակ քննարկվում է ռազմական օմբուդսմենի առանձին ինստիտուտի ներդրման հնարավորությունը՝ ներկայացնելով դրա մասնագիտական վերահսկողության առավելությունները, ինչպես նաև կառույցների գործառութային կրկնության և ինստիտուցիոնալ բարդացման հնարավոր ռիսկերը:

Հատուկ տեղ է հատկացվում քաղաքացիական հասարակության, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների դերին՝ որպես ոչ պետական վերահսկողության կարևոր բաղադրիչների: Նշվում է, որ դրանք նպաստում են պաշտպանական ոլորտի թափանցիկության, հանրային վերահսկողության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդմանը, սակայն դրանց ազդեցությունը հաճախ սահմանափակվում է պետական մարմինների հետ համագործակցության անկատար մեխանիզմներով և ռազմավարական համակարգված քաղաքականության բացակայությամբ:

Երրորդ՝ «**ՌԴ և ՀՀ զինված ուժերում քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները բազմամակարդակ անվտանգության համակարգի ստեղծման համատեքստում**» գլուխը կենտրոնանում է Ռուսաստանի Դաշնության բազմաստիճան անվտանգային կառավարման համակարգի, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական վերահսկողական համակարգերի համեմատական վերլուծության վրա: Համեմատական

ուսումնասիրությունն իրականացվում է ընթացակարգային, ինստիտուցիոնալ և կառուցվածքային մակարդակներում՝ նպատակ ունենալով բացահայտել երկու երկրների վերահսկողական համակարգերի առանձնահատկությունները, արդյունավետության աստիճանը, ինչպես նաև ժողովրդավարական վերահսկողության իրականացման հիմնախնդիրներն ու զարգացման հնարավորությունները:

Գլխում ուսումնասիրվում է ՌԴ անվտանգության կառավարման համակարգը՝ որպես կենտրոնացված և հիերարխիկ կառուցվածք ունեցող բազմաստիճան մոդել, որն ընդգրկում է դաշնային, տարածաշրջանային և տեղական մակարդակները: Վերլուծվում են անվտանգության ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտերը, պետական և ուժային կառույցների գործառույթները, ինչպես նաև դրանց փոխգործակցությունը ազգային անվտանգության քաղաքականության իրականացման գործընթացում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նախագահական իշխանության գերակայությանը, ուժային կառույցների կենտրոնական դերակատարությանը և անվտանգային քաղաքականության ձևավորման ու իրականացման մեխանիզմներին:

Գլուխը միաժամանակ անդրադառնում է ՌԴ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության համակարգին՝ դիտարկելով պետական, հասարակական և մասնավոր վերահսկողության ձևերը: Քննարկվում են նախագահի, կառավարության, պաշտպանության նախարարության, Անվտանգության խորհրդի, Դաշնային ժողովի, Հաշվիչ պալատի, Մարդու իրավունքների հանձնակատարի, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների և պաշտպանության նախարարությանը կից հանրային կառույցների դերակատարումները: Վերլուծության արդյունքում հիմնավորվում է, որ վերահսկողական մեխանիզմները, թեև ձևականորեն բազմաինստիտուցիոնալ բնույթ ունեն, գործնականում սահմանափակվում են կառավարման բարձր կենտրոնացվածությամբ, ռազմական ոլորտի գաղտնիությամբ, տեղեկատվության սահմանափակ հասանելիությամբ և քաղաքացիական ինստիտուտների սահմանափակ անկախությամբ:

Գլխի կարևոր ուղղություններից է նաև Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական վերահսկողական համակարգերի համեմատական ուսումնասիրությունը: Այս համատեքստում վերլուծվում են երկու երկրների կառավարման մոդելների, խորհրդարանական վերահսկողության ընթացակարգերի, մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների, հասարակական կազմակերպությունների և ՁԼՄ-ների դերակատարության միջև առկա տարբերություններն ու ընդհանրությունները: Հիմնավորվում է, որ ՀՀ-ում, հատկապես խորհրդարանական կառավարման համակարգի ներդրումից հետո, ձևավորվել են քաղաքացիական վերահսկողության համեմատաբար ավելի բաց և ճկուն մեխանիզմներ, մինչդեռ ՌԴ-ում գերակշռում է կենտրոնացված և գործադիր իշխանության վրա հիմնված վերահսկողական մոդելը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական վերահսկողության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն իրավական կարգավորումներով և

ինստիտուցիոնալ կառուցվածքով, այլև քաղաքական կամքով, հաշվետվողականության մշակույթով, հանրային մասնակցության աստիճանով և քաղաքացիական հասարակության իրական ազդեցությամբ:

Ատենախոսության արդյունքներով ձևակերպվել են հետևյալ եզրահանգումները.

1. Բանակը ժամանակակից պետությունում հանդես է գալիս ոչ միայն որպես ռազմական, այլև քաղաքական, սոցիալական և գաղափարական ինստիտուտ: Բանակը՝ իբրև պետության առանցքային ինստիտուտ, վաղուց դուրս է եկել զուտ ռազմական կառույց լինելու սահմաններից և վերածվել է միաժամանակ քաղաքական, սոցիալական և գաղափարական դերակատարի: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից պետություններում բանակը կարող է հանդես գալ ինչպես պետականության պահպանման հիմք, այնպես էլ ներքին քաղաքական ազդեցության գործիք: Տարբեր տեսական մոտեցումները բացահայտում են բանակի դերերի բազմազանությունը. մի կողմից այն դիտարկվում է որպես քաղաքականությունից զերծ տեխնիկական համակարգ, մյուս կողմից՝ որպես քաղաքական իշխանության մարմնացում կամ դրա երկարաձգում: Այս դիտարկումը հատկապես արդիական է ավտորիտար ռեժիմների համատեքստում, որտեղ բանակը հաճախ դիտվում է որպես իշխանության ապավեն և ոչ թե քաղաքացիական վերահսկողության ենթակա կառույց:

Հետազոտության արդյունքները փաստում են, որ առանց բանակի քաղաքացիական վերահսկողության ամուր մեխանիզմների, այն կարող է փոխակերպվել քաղաքական գործընթացների ակտիվ մասնակից՝ հաճախ վտանգելով ժողովրդավարական կայունությունը, սահմանադրական համակարգը և քաղաքացիական հասարակության զարգացումը: Հետևաբար, բանակի դերը պետք է հստակ սահմանվի յուրքանչյուր պետության իրավական դաշտում՝ առաջնահերթ ընդգծելով նրա քաղաքական չեզոքությունը և ենթակայությունը քաղաքացիական իշխանություններին:

2. Բանակ-պետություն-քաղաքացիական հասարակություն փոխհարաբերությունները պետք է դիտարկել ոչ թե որպես հիերարխիկ ենթակառուցվածքների շղթա, այլ փոխազդեցությունների դինամիկ համակարգ, որտեղ յուրաքանչյուր դերակատար իրականացնում է փոխլրացնող, բայց նաև սահմանագծված գործառույթ: Քաղաքացիական հասարակությունը, լինելով այս ՌՔՀՌՀ մոդելի միջին օղակը, հանդես է գալիս ոչ միայն որպես միջնորդ, այլ նաև վերահսկող, արժեքաստեղծ և հանրային գիտակցությունը ձևավորող ինստիտուտ: Այս համատեքստում քաղաքացիական վերահսկողությունը քաղաքացիական հասարակության կողմից զինված ուժերի վերահսկողության միջոցների, մեթոդների և մեխանիզմների այնպիսի ամբողջությունն է, որը գործում է գնահատելու և արժևորելու համար հանրային շահերի և ընդունված սոցիալական նորմերի տեսանկյունից: Զինված ուժերում տարբեր մարմինների և պաշտոնյաների գործունեությունը գնահատելիս կայուն սոցիալական նորմերի վրա կենտրոնանալը կազմում է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության քաղաքագիտական հայեցակարգի հիմնարար, համակարգաստեղծ առանձնահատկությունը:

3. ՀՀ-ում «ազգ-բանակ» հայեցակարգը ձևավորվել է որպես հասարակություն–բանակ փոխգործակցության խորացմանն ուղղված քաղաքական-ռազմավարական մոտեցում՝ նպատակ ունենալով ամրապնդել ազգային անվտանգության համակարգը: Այն հիմնված է պաշտպանության համազգային պատասխանատվության գաղափարի վրա՝ ընդգծելով հասարակության ակտիվ մասնակցությունը անվտանգության ապահովման գործընթացում: Միաժամանակ, հայեցակարգը ներկայումս չունի լիարժեք ինստիտուցիոնալ ձևավորում և հիմնականում դրսևորվում է գաղափարական և սոցիալական մակարդակներում: Տեսական համադրման արդյունքում այն կարող է դիտարկվել որպես հիբրիդային մոդել, որը միավորում է բանակ–հասարակություն ինտեգրացիան և պրոֆեսիոնալ բանակի տարանջատման սկզբունքները: Այս առումով, ՀՀ-ում «Ազգ-բանակ» հայեցակարգը պետք է հիմնվի ՌՔՀՌՀ մոդելի վրա: Ինչը ենթադրում է, որ զինված ուժերը հարաբերությունների հենման կետն են, որի գագաթնակետին են քաղաքացիական անձինք, ընտրված քաղաքացիական իշխանությունները և դատական համակարգը: ՌՔՀՌՀ մոդելի նպատակն է պահպանել ռազմաքաղաքացիական կազմավորումների հարաբերությունները հավասարակշռության մեջ՝ երկիրը զարգացնելու համար դեպի համախմբված ժողովրդավարություն: «Ազգ-բանակ» հայեցակարգի կենտրոնական թեզը պետք է լինի այն, որ ռազմաքաղաքացիական հարաբերությունների հիմնական դերակատարները ներառեն տեղական բնակչությանը և կամավորներին՝ իրենց վրա ազդող անվտանգության հարցերում իրենց անմիջական ներուժը ցուցաբերելու և պաշտպանելու ժողովրդավարական արժեքները:

4. Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրավական հիմքերը, թեև ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ, ոլորտային օրենսդրությամբ, ռազմավարական փաստաթղթերով և միջազգային պարտավորություններով, գործնականում չեն ապահովում լիարժեք և արդյունավետ վերահսկողություն: Թափանցիկության սահմանափակ մակարդակը, վերահսկողական մեխանիզմների թերզարգացվածությունը և գործադիր իշխանության գերակշռությունը հանգեցնում են նրան, որ քաղաքացիական վերահսկողությունը հաճախ կրում է ոչ լիարժեք բնույթ:

Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները՝ ուղղված ժողովրդավարական վերահսկողության, բյուջետային թափանցիկության, խորհրդարանական վերահսկողության և զինծառայողների իրավունքների պաշտպանության ապահովմանը, լիարժեք չեն իրացվում՝ պայմանավորված ինստիտուցիոնալ սահմանափակումներով և քաղաքացիական հասարակության սահմանափակ ներգրավվածությամբ: Միաժամանակ, արձանագրվում է, որ խորհրդարանական վերահսկողության գործիքակազմը, հատկապես՝ պաշտպանության բյուջեի և ռազմական գնումների ոլորտում շարունակում է մնալ ոչ բավարար զարգացած, իսկ հաշվետվողականության պակասը խորացնում է փակ կառավարման մշակույթի պահպանման ռիսկերը: Զինված ուժերում պահպանվող կարգապահական խախտումները, կոռուպցիոն ռիսկերը և ոչ կանոնադրական հարաբերությունները վկայում են, որ իրավական նորմերի առկայությունն ինքնին

բավարար չէ առանց դրանց ապահովող արդյունավետ մեխանիզմների: Հետևաբար քաղաքացիական վերահսկողության արդյունավետ համակարգի ձևավորումը պահանջում է ոչ միայն օրենսդրական դաշտի կատարելագործում, այլև ինստիտուցիոնալ միջավայրի զարգացում՝ ապահովելով խորհրդարանի, քաղաքացիական հասարակության, անկախ դիտորդական կառույցների և ՁԼՄ-ների իրական վերահսկողական գործիքակազմ: Միայն այս պայմաններում հնարավոր կլինի ձևավորել կենսունակ և հավասարակշռված համակարգ, որը կծառայի թե՛ ազգային անվտանգության, թե՛ հանրային վստահության ամրապնդմանը:

5. Քաղաքացիական վերահսկողության համակարգի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն իրավական նորմերի առկայությամբ, այլև քաղաքական կամքի հետևողական դրսևորմամբ: Չնայած ՀՀ կառավարության ռազմավարական փաստաթղթերում վերահսկողության մեխանիզմների կատարելագործումն ամրագրված է որպես նպատակ, այնուամենայնիվ հաշվետվությունները վկայում են դրա իրականացման բացերի մասին: Գործնականում բացակայում են կոնկրետ միջոցառումների, կառուցվածքային փոփոխությունների և հանրային մասնակցության վերաբերյալ արդյունքահեն գնահատականներ: Վերահսկողության ինստիտուտների թերաշխատումը մեծապես պայմանավորված է քաղաքական հաշվետվողականության պակասով: Հետևաբար քաղաքացիական վերահսկողությունը կարող է իրական գործիք դառնալ միայն քաղաքական կամքի հետևողական, հրապարակային և համակարգային դրսևորման դեպքում՝ մշտադիտարկման, խորհրդարանական լսումների և քաղաքացիական ներգրավման համադրմամբ:

6. ՀՀ պաշտպանության ոլորտի վերլուծությունը բացահայտում է համակարգային բնույթի խնդիրների համալիրը՝ ներառյալ թափանցիկության պակասը, կոռուպցիոն ռիսկերը, քաղաքացիական վերահսկողության թույլ գործիքակազմը, ինչպես նաև կառավարման մշակույթի, պրոֆեսիոնալիզմի և տեխնոլոգիական վերազինման բացերը: Գաղտնիության գերակայությունը խոչընդոտում է հաշվետվողականությանը, իսկ բանակի ներսում առկա ոչ կանոնադրային հարաբերությունները, ռազմական ոչ կենսունակ ենթակառուցվածքներն ու կոռուպցիոն ռիսկերը նվազեցնում են զինված ուժերի մարտունակության մակարդակը: Բարեփոխումները պետք է լինեն համակարգային՝ հիմնված քաղաքացիական մասնակցության ընդլայնման, վերահսկողական ինստիտուտների անկախության, տեղեկատվական թափանցիկության և նոր տեխնոլոգիաների արդիական ներդրման վրա:

Հետազոտության շրջանակում պրոֆեսիոնալ բանակ ստեղծելու բարեփոխման քննարկումը ցույց է տալիս, որ Հայաստանի զինված ուժերում պրոֆեսիոնալ բանակի ձևավորման գործընթացը պայմանավորված է ինչպես արտաքին անվտանգային միջավայրով, այնպես էլ ներքին ինստիտուցիոնալ և սոցիալ-տնտեսական սահմանափակումներով: Շարունակական սպառնալիքները պահպանում են զորակոչային համակարգի առաջնահերթությունը՝ սահմանափակելով պայմանագրային ծառայության ընդլայնման հնարավորությունները: Միաժամանակ, ֆինանսական ռեսուրսների սղությունը, մարդկային ռեսուրսների որակական

խնդիրները և հասարակության վստահության նվազումը էապես խոչընդոտում են պրոֆեսիոնալ մոդելի արդյունավետ կայացմանը: Նման պայմաններում ակնհայտ է, որ պրոֆեսիոնալ բանակի ձևավորումը չի կարող դիտարկվել միայն ռազմական կամ ֆինանսական բարեփոխումների շրջանակում, այլ պահանջում է համապարփակ մոտեցում՝ ներառելով կառավարման, կրթության, հասարակական ընկալումների և քաղաքացիական վերահսկողության համակարգային զարգացում:

7. ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը (ՄԻՊ)՝ որպես սահմանադրական անկախ մարմին, ունի առանցքային դերակատարություն զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական վերահսկողության իրականացման գործում: Նրա գործունեությունը ներառում է ինչպես անհատական բողոքների քննությունը, այնպես էլ համակարգային խնդիրների վերհանումն ու առաջարկությունների ներկայացումը պետական մարմիններին: Չնայած գործող մեխանիզմների արդյունավետության որոշ մակարդակի ապահովմանը՝ առկա են մի շարք սահմանափակումներ, որոնք խոչընդոտում են ՄԻՊ-ի լիարժեք ազդեցությունը հատկապես զինված ուժերում: Այս համատեքստում անհրաժեշտ է բարձրացնել ՄԻՊ-ի լիազորությունների իրավական հստակեցումը և ընդլայնումը, ապահովել բավարար ֆինանսավորում և մասնագիտական կարողությունների զարգացում, ինչպես նաև նախաձեռնել իրավագիտակցության բարձրացման նպատակով կրթական ծրագրեր՝ ուղղված ինչպես զինծառայողներին, այնպես էլ նրանց ընտանիքներին: Միայն համապարփակ և հետևողական մոտեցման դեպքում հնարավոր կլինի ապահովել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունն ու օրենքի գերակայությունը՝ ամրապնդելով ժողովրդավարական վերահսկողության ինստիտուտները ՀՀ անվտանգության ոլորտում:

8. Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես քաղաքացիական վերահսկողության մեխանիզմի արդյունավետության բարձրացման տեսանկյունից ռազմական օմբուդսմենի առանձին ինստիտուտի ներդրումը կարող է դիտարկվել որպես ժողովրդավարական վերահսկողության խորացման ուղի: Նման կառույցը հնարավորություն կտա կենտրոնանալ բացառապես զինծառայողների իրավունքների վրա՝ բարձրացնելով ինչպես ոլորտային մասնագիտացումն, այնպես էլ զինծառայողների վստահությունը վերահսկող մարմնի նկատմամբ: Միաժամանակ, բողոքների հիման վրա համակարգային առաջարկությունների ձևավորումը կարող է նպաստել զինված ուժերում խորքային բարեփոխումների իրականացմանը, բացի այդ՝ այս մոդելի առավելություններից է վերջինիս անկախությունը, ինչը բարձրացնում է վերջինիս նկատմամբ հասարակության և զինծառայողների վստահելիությունը և դիմելիության մակարդակը: Սակայն Հայաստանի նման սահմանափակ ռեսուրսներ ունեցող պետության պայմաններում պետք է համարժեք գնահատել առանձին ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրման համատեքստում առաջացող ռիսկերը, մասնավորապես՝ համակարգի կրկնօրինակման, իրավասությունների բախման, կադրային ապահովման և հանրային վստահության նվազման տեսանկյունից: Ուստի, նման որոշում կայացնելուց առաջ անհրաժեշտ է իրականացնել

հիմնարար գնահատում՝ հիմնվելով արդյունավետության, համարժեքության և ազգային համատեքստի համապատասխանության սկզբունքների վրա:

9. ՀՀ-ում Ազգային ժողովի կողմից իրականացվող քաղաքացիական վերահսկողությունը զինված ուժերի նկատմամբ ձևապես հիմնված է ամուր իրավական դաշտի վրա՝ ներառյալ բյուջետային վերահսկողությունը, հարցապնդման գործիքը, քննիչ հանձնաժողովները և ռազմավարական քաղաքականության վերահսկումը: Սակայն գործնականում այս հնարավորությունների զգալի մասը մնում է թերօգտագործված:

Խորհրդարանական վերահսկողության արդյունավետության խաթարումը պայմանավորված է ինչպես տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և ռազմավարական որոշումների փակությամբ, այնպես էլ ընդդիմադիր խմբակցությունների և հանրային մասնակցության սահմանափակ ներգրավմամբ: Բյուջետային վերահսկողության գործառույթը առավելապես կենտրոնացված է բյուջեի հաստատման և հաշվետվության հաստատման փուլերում, մինչդեռ ընթացիկ վերահսկողությունն ու ֆինանսական հոսքերի մշտադիտարկումը դուրս են ՀՀ ԱԺ լիազորությունների դաշտից:

ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի թափանցիկության պակասը, ֆինանսավորման սահմանափակ հնարավորությունները և անդամների մասնագիտական պատրաստվածության խնդիրները ևս սահմանափակում են վերահսկողական ազդեցությունը:

Խնդրի լուծման համար անհրաժեշտ է անցում կատարել ավելի ապակենտրոնացված կառավարման մոդելի՝ ամրապնդելով ՀՀ ԱԺ-ի վերահսկողական լիազորությունները՝ ներդնելով մասնակցային բյուջետավորման գործիքներ և ապահովելով քննիչ հանձնաժողովների լիարժեք գործարկում: Միայն այս պայմաններում ՀՀ ԱԺ-ն կկարողանա հանդես գալ որպես իրական ժողովրդավարական վերահսկողության մարմին պաշտպանական ոլորտում՝ ներառյալ միջազգային պարտավորությունների կատարման նկատմամբ:

10. Քաղաքացիական վերահսկողության ոլորտում գործընկերային հարաբերությունները հիմնված են երեք սկզբունքների վրա՝ զինվորականների քաղաքական գործունեության խիստ սահմանափակումներ, քաղաքացիական և ռազմական ինստիտուտների միջև իրավասության հստակ տարանջատում և պարտականությունների հստակ տարանջատում այն մարմինների միջև, որոնց օրենսդրությամբ վերապահված է լեգալ և լեգիտիմ ուժ կիրառելու իրավունքը: Անկախ ներքաղաքական կոնկրետ իրավիճակներից և դրանց առանձնահատկություններից՝ զինված ուժերը պետք է պահպանեն ՔՀԿ-ների և իրավական պետության արժեքները և իրավունք չունեն մերժելու պետական ապարատի ներսում գործող քաղաքական առաջնորդներին, ովքեր իրենց պաշտոնները ստանձնել են ցիվիլիարխիկ եղանակով:

11. ՌԴ անվտանգության կառավարման համակարգը կառուցված է խիստ կենտրոնացվածության հիմքով՝ տեսականորեն հիմնվելով դաշնային, տարածաշրջանային և տեղական մակարդակների միջև լիազորությունների բաշխման վրա: Սակայն գործնականում այդ բաշխվածությունն ունի բացառապես ձևական բնույթ

և կիրառվում է որպես վերևից ներքև ուղղորդվող ենթակա համակարգ՝ առանց ինստիտուցիոնալ ինքնավարության կամ տեղային որոշումների ինքնուրույն իրավական ուժի:

Քաղաքացիական վերահսկողության ինստիտուտները՝ խորհրդարանական վերահսկողությունը, օմբուդսմենը, հասարակական խորհուրդները և դիտորդական խմբերը, ինչպես դաշնային, այնպես էլ՝ տարածաշրջանային մակարդակներում, գործնականում զուրկ են լիազորություններից և ազդեցությունից: Նրանց առկայությունը ավելի շատ ծառայում է ժողովրդավարական իմիտացիայի, քան իրական վերահսկողական գործառույթի իրականացման նպատակին:

Տարածաշրջանային և տեղական իշխանությունները վերածվել են դաշնային քաղաքականության փոխանցող օղակների՝ չունենալով բավարար իրավասություններ, ռեսուրսներ կամ մանդատ՝ ռազմական և անվտանգային որոշումների վրա ազդելու համար: Տեղեկատվության սահմանափակումները, պետական գաղտնիքի չարաշահումը և փակ կառավարման մշակույթը վերացնում են հաշվետվողականության հնարավորությունները բոլոր մակարդակներում: Այս պայմաններում քաղաքացիական վերահսկողությունը ՌԴ-ում վերածվել է պաստառային ժողովրդավարության բաղադրիչի, և իրապես չի գործարկվում ոչ դաշնային, ոչ տարածաշրջանային մակարդակներում: Ուստի, եթե չապահովվի լիազորությունների իրական բաշխում, ինստիտուցիոնալ անկախություն և տեղեկատվության մատչելիություն, քաղաքացիների մասնակցությունն անվտանգության համակարգին կմնա բացառապես սիմվոլիկ:

12. ՌԴ-ում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը ձևավորված է բազմաբաղադրիչ ինստիտուցիոնալ համակարգով, սակայն դրա գործնական արդյունավետությունը էապես սահմանափակված է: Չնայած վերահսկողության տարբեր սուբյեկտների՝ գործադիր իշխանության, խորհրդարանի, մարդու իրավունքների հանձնակատարի, հասարակական կազմակերպությունների և խորհրդատվական մարմինների առկայությանը, դրանց գործունեությունը կրում է առավելապես ձևական բնույթ՝ պայմանավորված ինստիտուցիոնալ կախվածությամբ, իրավական սահմանափակումներով և քաղաքական միջամտություններով:

Երկրի նախագահի ինստիտուտի և գործադիր իշխանության գերկենտրոնացումը, խորհրդարանական վերահսկողության սահմանափակ հնարավորությունները, մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների թերզարգացվածությունը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և ՀԼՄ-ների գործունեության սահմանափակումները հանգեցնում են նրան, որ վերահսկողության համակարգը չի ապահովում իրական հաշվետվողականություն և թափանցիկություն: Այս պայմաններում վերահսկողությունն ավելի շատ պատրանքային է, քան գործնական՝ նպաստելով համակարգային խնդիրների պահպանմանն ու հետագա խորացմանը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՌՔՀՌՀ-ի մոդելը չի ձևավորում արդյունավետ հակակշիռների և զսպումների մեխանիզմներ, ինչի հետևանքով

ռազմական քաղաքականության նկատմամբ հանրային վերահսկողությունը սահմանափակվում է ձևական ինստիտուցիոնալ շրջանակներով:

Այսպիսով, ՌԴ-ում բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության արդյունավետությունն ուղիղ համեմատական է քաղաքացիական հասարակության ինստիտուտների և արժեքների զարգացմանը: Նման պայմաններում բանակը խստորեն վերահսկվում է պետության կողմից, և ՔՀԿ-ների դերը նվազագույնի է հասցվում ՌԴ քաղաքական համակարգում: Նման ուժեղ կենտրոնացված իշխանության պայմաններում, ժողովրդավարական ինստիտուտների և արժեքների ազդեցությունը բանակի վրա սահմանափակ է. այս ազդեցության ուղիներն ու մեխանիզմները կրճատվում են, հրապարակայնությունը՝ չափաբաժիններով սահմանափակված, լրատվամիջոցները վերահսկվում են պետության կողմից, իսկ բյուրոկրատական խոչընդոտները լայնածավալ են:

13. ՌԴ-ում խորհրդարանական վերահսկողության արդյունավետության բարձրացման և ռազմական ոլորտում ժողովրդավարական հաշվետվողականության ամրապնդման նպատակով առաջարկվում է իրականացնել հետևյալ համակարգային միջոցառումները: Նախ՝ անհրաժեշտ է բարձրացնել պաշտպանական բյուջեի թափանցիկությունը՝ ապահովելով այն տվյալների հասանելիությունը, որոնք չեն վնասում ազգային անվտանգությանը: Միաժամանակ կարևոր է խթանել անկախ ռազմական փորձագիտությունը՝ ներգրավելով քաղաքացիական փորձագետների պաշտպանության հանձնաժողովների աշխատանքներում և զարգացնելով ռազմաքաղաքական հետազոտությունները: Առանձնահատուկ նշանակություն ունի հանրային լսումների և հաշվետվությունների ինստիտուցիոնալացումը՝ ապահովելով պաշտպանական ծախսերի, զինծառայողների իրավունքների և բարեփոխումների վերաբերյալ բաց քննարկումներ ՔՀԿ-ների և փորձագետների մասնակցությամբ: Բացի այդ, անհրաժեշտ է ապահովել հանձնաժողովների կազմի բազմազանություն՝ մեծացնելով քաղաքացիական պատգամավորների մասնակցությունը և զարգացնելով նրանց մասնագիտական կարողությունները: Այս միջոցառումների համակցված իրականացումը կարող է էապես բարձրացնել խորհրդարանական վերահսկողության բովանդակային արդյունավետությունը և սահմանափակել դրա ձևական բնույթը:

14. Աշխատանքի շրջանակում ՌԴ ռազմաքաղաքական վերահսկողության արդյունավետությունն ապահովելու համար առաջարկվում է ներդնել անկախ Ռազմական գործերի հանձնակատարի ինստիտուտ կամ առկա մոդելի շրջանակում ստեղծել մասնագիտացված ստորաբաժանում: Կարևոր է կատարել օրենսդրական բարեփոխումներ՝ սահմանելով ռազմական բողոքների քննության հստակ և պարտադիր ընթացակարգեր, ինչպես նաև ամրապնդել հանձնակատարի ինստիտուցիոնալ անկախությունը: ՔՀԿ-ների հետ համագործակցության զարգացումը և թափանցիկության բարձրացումը կնպաստեն խախտումների բացահայտմանը և հանրային վստահության ամրապնդմանը՝ ձևավորելով առավել արդյունավետ, հաշվետու և անկախ վերահսկողության համակարգ:

15. Հայաստանի և Ռուսաստանի զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ արտաքին

ինստիտուցիոնալ նմանությունների պայմաններում երկու երկրները էապես տարբերվում են վերահսկողության իրական բովանդակությամբ և արդյունավետությամբ:

ՀՀ-ում քաղաքացիական վերահսկողությունը հիմնված է խորհրդարանական կառավարման մոդելի վրա և, չնայած առկա սահմանափակումներին, ապահովում է որոշակի ինստիտուցիոնալ հավասարակշռություն, հանրային քննարկումների առկայություն և վերահսկողական ներուժ՝ մարդու իրավունքների պաշտպանի, քաղաքացիական հասարակության և ՁԼՄ-ների մասնակցությամբ: Ի հակադրություն, ՌԴ-ում քաղաքացիական վերահսկողությունը գործում է կենտրոնացված կառավարման և ինստիտուցիոնալ կախվածության պայմաններում, որտեղ վերահսկողական մեխանիզմները մեծապես կրում են ձևական բնույթ: Այս համակարգում վերահսկողությունը առավելապես պատրանքային է, քան գործնական՝ թույլ տալով խորանալ համակարգային խնդիրներին՝ առանց իրական հակազդման մեխանիզմների:

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս՝ երկու երկրներում էլ զինված ուժերի քաղաքացիական վերահսկողությունը դրվագային գործողություն չէ, այլ բարդ և շարունակական սոցիալական գործընթաց: Դրա արդյունավետությունը կախված է ոչ միայն օրենսդրական շրջանակի և գործող պետական ու հասարակական մեխանիզմների որակից, այլև հասարակության ընդհանուր առմամբ և յուրաքանչյուր քաղաքացու քաղաքական մշակույթի կատարելագործումից, ինչպես նաև հասարակական գիտակցության փոփոխությունից, որը պատերազմական և կոնֆլիկտային մի շարք գործոնների ազդեցության պատճառով դեռևս չի ազատվել ռազմականացման միտումներից:

Ատենախոսության հիմնադրույթները արտացոլվել են հետևյալ գիտական հոդվածներում.

1. Ջիլավյան Ս., «Ռազմական օմբուդսմենի ինստիտուտը զինված ուժերում. Քաղաքացիական վերահսկողության ընթացակարգ», «Գիտական Արցախ», Երևան, N 1 (24-րդ) 2025: DOI: 10.52063/25792652-2025.1.24-125
2. Ջիլավյան Ս., «Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ընթացակարգերի կիրառման առանձնահատկությունները», «ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀ» («РЕГИОН И МИР») գիտավերլուծական հանդես, Երևան, հատոր ԺԶ, # 3 (58), 2025: https://doi.org/10.58587/18292437-2025.3-20
3. Ջիլավյան Ս., «ՀՀ Ազգային ժողովը որպես զինված ուժերում քաղաքացիական վերահսկողության ընթացակարգ», Analytical Bulletin of Armenian and Regional Studies («Վերլուծական տեղեկագիր հայագիտության և տարածաշրջանագիտության»), Volume 20, 2025: DOI: https://doi.org/10.56673/18294502-tna2025.20-2
4. Джилавян С., Енгоян А., Организации гражданского общества как институт контроля за сферой обороны РА. «ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀ» («РЕГИОН И

МИР»), научно-аналитический журнал, Ереван, том XVI, No 3 (58), 2025. DOI: https://doi.org/10.58587/18292437-2025.3-26.

5. Jilavyan S., Institutional foundations for the management and economic efficiency of the process of civilian control of the country's armed forces. "ALTERNATIVE" («ԱՅԼԸՆՏՐԱՆՔ»), Yerevan, 2025.

6. Jilavyan S., Harutyunyan G., Vardazaryan M., Dynamics of Russian-Turkish Relations After the Second Karabakh War: New Priorities of National Interests and Strategies of Struggle in the South Caucasus. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 4(1(10), 2025. DOI: https://doi.org/10.46991/JOPS/2025.4.10.125

7. Jilavyan S., Keryan G., New Political Growth Points for Strategic Cooperation Between Russia and Iran: Sharing Experience or Strengthening Trust?. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 4(3(12), 2025. DOI: https://doi.org/10.46991/JOPS/2025.4.12.129

8. Jilavyan S., Arsenyan M., Evaluating NATO Enlargement: From Cold War Victory to the Russia-Ukraine War, edited by James Goldgeier, and Joshua R. Itzkowitz Shifrinson. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, Vol. 3 No 3 (9), 2024. DOI: https://doi.org/10.46991/JOPS/2024.3.9.178

9. Jilavyan S., Mkrtchyan H., Towards a Peaceful Development of Cyberspace: De-Escalation of State-Led Cyber Conflicts and Arms Control of Cyber Weapons. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, Vol. 3 No 2 (8), 2024. DOI: https://doi.org/10.46991/JOPS/2024.3.8.122

10. Jilavyan S., Barseghyan S., Securitization and Democracy in Eurasia: Transformation and Development in the OSCE Region, edited by Anja Mihr, Paolo Sorbello, and Brigitte Weiffen. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, Vol. 2 No 1 (4), 2023. DOI: https://doi.org/10.1007/978-3-031-16659-4.

11. Jilavyan S., Women's Everyday Lives in War and Peace in the South Caucasus, edited by Ulrike Ziemer. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, Vol. 1 No 2, 2022. DOI: https://doi.org/10.1007/978-3-030-25517-6_8.

12. Jilavyan S., The People and the Nation: Populism and Ethno-Territorial Politics in Europe, edited by Reinhard Heinisch, Emanuele Massetti, and Oscar Mazzoleni. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, Vol. 1 No 1, 2022. DOI: https://doi.org/10.46991/JOPS/2022.1.1.164

ДЖИЛАВЯН СВЕТЛАНА КАМОЕВНА

ОСНОВНЫЕ МЕХАНИЗМЫ ГРАЖДАНСКОГО КОНТРОЛЯ НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”. Защита диссертации состоится 29 июня 2026 года в 13:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА: Адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1.

РЕЗЮМЕ

В условиях современных геополитических вызовов, вооружённых конфликтов и трансформации систем безопасности проблема гражданского контроля над вооружёнными силами приобретает особую актуальность.

Для Республики Армения и Российской Федерации проблема обеспечения прозрачности, подотчётности и демократического управления в оборонной сфере приобретает особое значение в контексте региональной нестабильности и усиления военно-политических угроз. В частности события Апрельской войны 2016 г., 44-дневной войны 2020 г., а также нападения на суверенную территорию Республики Армения в сентябре 2022 г. выявили системные проблемы, связанные с защитой прав военнослужащих, эффективностью парламентского и общественного контроля, управлением оборонными ресурсами и уровнем общественного доверия к вооружённым силам. А в России, где военные структуры действуют в условиях централизованного управления, вопросы защиты прав военнослужащих часто отходят на второй план из-за ограниченной прозрачности контроля и низкого уровня вовлеченности гражданского общества.

Одновременно исследование актуализируется различиями в моделях гражданского контроля Армении и России. В Армении после перехода к парламентской форме правления усилились предпосылки демократического контроля и расширения роли гражданских институтов, тогда как в России доминирует централизованная вертикаль управления и ограниченная вовлечённость гражданского общества в сферу безопасности. В этих условиях сравнительный анализ армянской и российской моделей позволяет выявить сильные и слабые стороны существующих механизмов, определить перспективы их совершенствования и предложить новые подходы к обеспечению баланса между национальной безопасностью и демократическим контролем.

Цель исследования: провести комплексный сравнительный анализ механизмов гражданского контроля над вооружёнными силами Республики Армения и Российской Федерации, выявить их законодательные, институциональные и практические особенности, а также предложить пути совершенствования системы демократического

контроля и защиты прав военнослужащих в условиях современных вызовов безопасности.

Методология: исследование основано на системном, сравнительном, институциональном и историческом подходах. В работе применяются методы анализа нормативно-правовых актов, официальных документов, кейс-стади, сравнительного анализа, а также качественные и количественные методы исследования.

Структура диссертации:

Первая глава посвящена теоретико-методологическим основам гражданского контроля над вооружёнными силами как фактору укрепления многоуровневой системы безопасности. Анализируются взаимоотношения государства, армии и гражданского общества, а также классические и современные теории военно-гражданских отношений.

Во второй главе рассматриваются законодательные, институциональные и практические предпосылки формирования системы гражданского контроля над вооружёнными силами в Республике Армения. Исследованы механизмы парламентского, исполнительного, омбудсменского и общественного контроля, проблемы управления оборонной сферой, а также направления реформирования системы.

Третья глава посвящена анализу многоуровневой системы безопасности Российской Федерации, механизмов гражданского контроля над вооружёнными силами РФ, а также сравнительному исследованию армянской и российской моделей контроля на институциональном, структурном и процедурном уровнях.

В заключении обобщаются основные результаты исследования, формулируются выводы о состоянии и эффективности систем гражданского контроля в Армении и России, а также предлагаются научно-практические рекомендации по совершенствованию механизмов демократического контроля над вооружёнными силами в условиях современных угроз безопасности.

JILAVYAN SVETLANA KAMO

THE MAIN MECHANISMS OF CIVILIAN CONTROL OVER THE ARMED FORCES IN THE REPUBLIC OF ARMENIA AND THE RUSSIAN FEDERATION

Dissertation under 23.00.02 "Political Institutions and Processes," aspiring to earn Ph.D. in Political Sciences. The defense of the dissertation will take place on June 29, 2026, at 13:00 at the Specialized Council 056 "Political Sciences and International Relations" of the RA MoESCS HESC, operating at Yerevan State University.
Address: RA, Yerevan, 0025, 1 Alex Manoogian.

ABSTRACT

Relevance of the Research: In the context of contemporary geopolitical challenges, armed conflicts, and the transformation of security systems, the issue of civilian control over the armed forces is gaining particular relevance. For the Republic of Armenia and the Russian Federation, the problems of ensuring transparency, accountability, and democratic governance in the defence sector have become especially significant in the context of regional instability and increasing military-political threats. In particular, the April 2016 war, the 44-day war of 2020, as well as the attacks on the sovereign territory of the Republic of Armenia in September 2022, revealed systemic problems related to the protection of servicemen's rights, the effectiveness of parliamentary and public oversight, defence resource management, and the level of public trust in the armed forces. And in Russia, where military structures operate under a centralized system of governance, the protection of servicemen's rights often becomes a secondary concern due to limited transparency of oversight mechanisms and the low level of civil society involvement.

At the same time, the study is further justified by the differences between the Armenian and Russian models of civilian control. In Armenia, following the transition to a parliamentary system of governance, the prerequisites for democratic oversight and the role of civil institutions have been strengthened, whereas in Russia a centralized vertical system of governance dominates, with limited involvement of civil society in the security sector. Under these conditions, a comparative analysis of the Armenian and Russian models makes it possible to identify the strengths and weaknesses of existing mechanisms, determine prospects for their improvement, and propose new approaches to ensuring a balance between national security and democratic control.

Objective of the research: to conduct a comprehensive comparative analysis of the mechanisms of civilian control over the armed forces of the Republic of Armenia and the Russian Federation, to identify their legal, institutional, and practical features, and to propose ways to improve the system of democratic oversight and protection of servicemen's rights in the context of contemporary security challenges.

Methodology: the research is based on systemic, comparative, institutional, and historical approaches. It employs methods of legal and normative document analysis, official

reports, case studies, comparative analysis, as well as qualitative and quantitative research methods.

Structure of the dissertation:

The first chapter is devoted to the theoretical and methodological foundations of civilian control over the armed forces as a factor in strengthening a multi-level security system. It analyzes the relationship between the state, the military, and civil society, as well as classical and contemporary theories of civil-military relations.

The second chapter examines the legal, institutional, and practical prerequisites for the formation of a system of civilian control over the armed forces in the Republic of Armenia. The mechanisms of parliamentary, executive, ombudsman, and public oversight, the challenges of defense governance, and the directions for system reform have been examined.

The third chapter focuses on the analysis of the multi-level security system of the Russian Federation, mechanisms of civilian control over the armed forces of the Russian Federation, and a comparative study of Armenian and Russian control models at the institutional, structural, and procedural levels.

The study summarizes the main findings, formulates conclusions regarding the state and effectiveness of civilian control systems in Armenia and Russia, and proposes scientific and practical recommendations for improving democratic control mechanisms over the armed forces in the context of contemporary security threats.